

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

С 1926 г. № 32

№ 967ШРЧВІСШІС 967ЧРЧІС 2

ԵՐԵՆԲՈՒՐԳ

ԿՈՄՈՒՆԱՐԻ ԾԽԱՄՈՐՃԵ

ԳՐԱԴԱՐԱՆ
ИНСТИТУТА
ПОСТОНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1926

891.71

5-86

ԴԵՏԶՐԱ
ԱՊԱԿԿԱ

C1926-1534

25 SEP 2006

X204

4

1383

№ ԳԵՂԱՐՔԵՍԱԿՈՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.71

5-86

ԵՐԵՎԱՆԻ ՐԱ



ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ԾԽԱՄՈՒՃԸ

Թարգմ. Ա.Մելիք

ՀԻ ՇԱՀԱ
ԲՈՒԺՈԽԵԴՆԻ
Ակադեմիա Նauk
СССР



1926

Հ.Ա.Խ.Հ. ՊԵՏԱՐԱՏ № 316 ՄՈՍԿՎԱ

16.04.2013

12.200

Տ Տ Տ Տ Տ Տ
Տ Տ Տ Տ Տ Տ
Տ Տ Տ Տ Տ Տ

Տ Տ Տ Տ Տ Տ
Տ Տ Տ Տ Տ Տ
Տ Տ Տ Տ Տ Տ

ԿՈՄՈՒՆԱՐԻ ԾԽԱՄՈՐՁԼ

Շատ գեղեցիկ քաղաքներ կան, ամենից գեղեցիկը՝ Փարիզն եւ—այնտեղ ծիծաղում են անհոգ կանայք, շագանակի ծառերի տակ շվայտ, դուզված տղամարդիկ խմում են ոշարակ, և լույսերի հազարավոր ցոլքեր ծփում են ընդարձակ հրապարակների հայելու նման վողորկ հատակին:

Քարտաշ Լուի Ռուն ծնվել եր Փարիզում։ Նա հիշում եր 48 թվականի «Հուլիսյան որերը»։ Այն ժամանակ նա յոթ տարեկան եր և ուտել եր ուզում։ Ազուավի ձագի նման նա բաց եր անում բերանը և սպասում, բայց իզուր եր սպասում, վորովհետեւ հայրը՝ ժան Ռուն հաց չուներ։ Նա ուներ հրացան միայն, վորը ուտել չեր կարելի։ Լուին հիշում եր այն ամասային առավոտը, յերբ հայրը սրբում եր հրացանը, իսկ մայրը լալիս եր և աչքերը տրորում փեշերով։ Լուին վագեց հոր յետելից, —նա կարծում եր, վոր հայրը կգնա՝ այդ սրբած հրացանով կսպանի հացավաճախին և կլոլի մի մեծ



59660.66

հաց ու տուն կրերի։ Բայց հայրը հանդիպեց
թախծոտ մարդկանց ուրիշ խմբերի, վորոնք
նույնպես հրացաններ ունեյին։ Նրանք սկսեցին
միասին յերգել և աղաղակել։ «Հաց»։

Լուին անհամբեր սպասում եր, վոր այդ
հիանալի յերգերից հետո, պատուհաններից պի-
տի թափեն բլիթներ և անուշ թխվածքներ։
Բայց տեղի ունեցավ հակառակը, Բարձրացավ
մեծ աղմուկ և տեղացին գնդակներ։ Մարդկան-
ցից մեկը, վոր «Հաց» եր աղաղակում՝ ցավի
ձիչ արձակեց, և ընկավ։ Այն ժամանակ հայ-
րը և մյուսները սկսեցին ինչ վոր անհասկա-
նալի բաներ անել—նրանք գետին փռեցին
յերկու մեծ նստարաններ, հարևան բակից քաշ
տվին ջարդված սեղաններ, տակառներ, և
նույնիսկ հավաքունը։ Այդ բոլորը նրանք կու-
տեցին փողոցի մեջտեղը, իսկ իրենք պառկե-
ցին գետնին։ Լուին մտածեց, վոր յերեի այդ
թախծոտ մարդիկ պահվառցի են խաղում։ Նրանք
սկսեցին կրակել հրացանները. կրակում եյին
նույնպես զիմացից։ Քիչ անց, յեկան ուրիշ
մարդիկ, վորոնք նույնպես հրացաններ ու-
նեյին, բայց վորոնք ժպառում եյին ուրախ։
Նրանց գլխակների վրա կային փայլուն, խոշոր
զինանիշներ։ Նրանց անվանում եյին «գվարդիա-
կաններ»։ Այդ մարդիկ վերցրին հորը և տարան

Սուրբ Մինասի ծառուղով։ Լուին մտածեց, վոր
այդ ուրախ գվարդիականները կկերակըն հորը
և ինքն ել ընկավ նրանց յետեկց՝ թեև ուշ եր։
Ծառուղում կանայք ծիծաղում եյին, շագանա-
կի ծառերի տակ՝ շվայտ, զուգված մարդիկ
խմում եյին ոշարակ, և լույսի հազարավոր ցոլ-
քեր ծփում եյին հայելու նման վողորկ մայթե-
րին։ Սուրբ Մինասի դարպանների մոտ անհոգ
կանանցից մեկը, վոր նստած եր սրճարանում՝
կանչեց գվարդիականներին։

— Ի՞նչու՞ յեք այդքան հեռու տանում, նա
կարող ե այստեղ ել ստանալ իր բաժինը...

Լուին իսկույն վազեց ծիծաղող կնոջ մոտ և
լուս, ագուավի ձագի նման բացեց բերանը։
Գվարդիականներից մեկը վերցրեց հրացանը և
նորից կրակեց. հայրը ճչաց և ընկավ, իսկ
կինը ծիծաղեց։ Լուին վազեց դեպի հայրը և
փաթթվեց նրա վոտներին. հայրը թվրտում եր,
կարծես թե սողալ եր ուղում. Լուին սկսեց
սոսկալի ճչալ։

Այն ժամանակ կինը ասաց.

— Սպանեցե՞ք այդ լակոտին ել։

Բայց գվարդ, զուգված մի տղամարդ, վոր
հարեւն սեղանի մոտ ոշարակ եր խմում՝ առար-
կեց.

— Ել ո՞վ կմնա՞ կաշխատի։

Յեկ կուին ապրեց։ Ահարկու հուլիսից հետո,
յեկավ խաղաղ ոգոստոս ամիսը, կուին մեծացավ
և արդարացնում եր այն զվարթ, զուգված մար-
դու հույսերը։ Հայր՝ ժան Ռուն քարտաշ եր,
ինքը կուի Ռուն ել դարձավ քարտաշ։ Հագած
կտավի լայն անդրավարտիկ և կապույտ շապիկ՝
նա աներ եր շինում, ամառ ու ձմեռ աշխա-
տում եր անդադար։ Գեղեցիկ Փարիզը ուզում
եր ավելի գեղեցկանալ և կուին այնտեղ եր՝
վորտեղ նոր փողոցներ եյին շինվում։ Քարտաշ
կուին աշխատում եր, յերբ շինվում եյին Յոթ-
նաշող Աստղի հրապարակը, Գառումանի և Մալեր-
բի լայն ծառուղիները և Ութերայի շքեղ պողո-
տան՝ ուր շատպում եյին առետրականները,
ցուցադրելու թանկազին մորթիներ, գոհարեղեն-
ներ և պչաճնքի ուրիշ առարկաներ։ Նա շի-
նեց թատրոններ, խանութներ, սրճարաններ և
բանկեր, շինեց հիանալի աներ, վորպեսզի ան-
հոգ կանայք, այնտեղ կարողանան առաջվա-
նման նորից ծիծաղեր յերբ փչում և կամանշի
քամին, յերբ բանվորական թաղերում խոնավ
ցրից սարսում են մարդկանց վոսկորները։ Նա
շինեց պարասրաներ՝ վորպեսզի զվարթ, զուգ-
ված տղամարդիկ կարողանան այնտեղ ոշարակ
խմել՝ յերբ լինում են խոնավ, խավար զիշեր-
ներ։ Նա բարձրացնում եր ծանր քարեր, և շի-

նում քաղաքներից ամենից գեղեցիկ քաղաքի՝
Փարիզի մայթերը։

Կապույտ շապիկ հագած հաղարավոր բան-
վորներից մեկն եր կուի Ռուն։ Հագած լայն
անդրավարտիկ, կրոս, զլիխին լայն ձկե գլխարկ,
կավե ծխամորձը բերանին՝ հազարավոր ուրիշ-
ների նման, աշխատում եր նա և քրտինք թա-
փում Յերկրորդ կայսրության համար։

Նա շինում եր սքանչելի տներ, իսկ ինքը
ցերեկները անց եր կացնում աշխատելով, իսկ
զիշերը՝ պառկում եր իր գարշահոտ բնում, վորը
գտնվում եր Սև Այրու փողոցում, Սուրբ Անտո-
նիոսի կալվածքի մոտ։ Նրա բնակարանը կար-
ծես թե շան բուն լիներ, վորից փչում եր կրի,
քրտինքի, սե, եժան տեսակի ծխախոտի, կեղ-
տոտ պալիտակեղենի զգիկի հոտը։ Իսկ Սև Այ-
րու ամբողջ փողոցից մինչև Սուրբ Անտոնիոսի
շրջակայքը փչում եր խանձված ձեթի հոտ.
առեվտրականները տապակում եյին գետնախլն-
ձոր, ձիու միս, աղ զրած ձուկ, վորը լցնելու
ամեն տեսակ աղբ, վորից հոտն ու ծուլք բոնում
եր շրջակայքը։ Բայց, իհարկե, վոչ թե Սև Այրու
փողոցի համար, այլ այն սքանչելի ծառուղիների,
անուշավետ ծառաստանների և շքեղ պողոտանե-
րի համար ե, վոր Փարիզը անվանում են աշխար-
հիս բոլոր քաղաքներից ամենից գեղեցիկը։

Լուի Ռուն շինեց սրճարաններ, պարասրահներ, նա քար եր կրում «Վայելքի սրճարանի» համար, ուր սիրում եյին հավաքվել շախմատ խաղացողները։ Նա քար եր տաշում «Անդրշիական սրճարանի» համար, ուր հանդիպում եյին արտասահմանից յեկած հայտնի մարդիկ և հարուստ ձիատերեր՝ ձիարշավերի ժամանակ։ Նա շինեց «Արվեստի պալատը», ուր տասնյակ թատրոններից գերասաններ եյին գալիս։ Լուի Ռուն կառուցում եր ամեն տեսակի շենքեր՝ մարդկանցից արժանավորների համար։ Բայց յերբեք Լուի Ռուն հոր մահվանից հետո չեր մոտենում սրճարաններին, և վոչ մի անգամ նա չփորձեց ոշարակ խմել։ Յերբ նա գործառերից ստանում եր մի քանի սպիտակ փողեր՝ այդ փողերը տանում եր Սև Այրու փողոցը, տալիս մի ծեր զինեպանի, վորը վերադարձնում եր Լուիյին մի քանի սկ, խոշոր փողեր ու մի պըդտոր հեղուկ ածում կավե բաժակի մեջ։ Լուին մի շունչով խմում եր այն, և դառնում եր իր բունը, քնում։

Յերբ չեր լինում վոչ սպիտակը վոչ սկ փող, վոչ խմելու բան, վոչ հաց, վոչ ել աշխատանք, — Լուին գրպաններում ման եր գալիս ծխախոտի փշուրներ, կամ փողոցում հավաքում եր ծխախոտի մնացորդներ, ածում իր ծխամորձը և

մոայլ՝ թափառում եր Սուրբ Անտոնիոսի շրջակայքը։ Նա չեր յերգում և չեր աղաղակում «հաց», ինչպես այդ արեց մի որ հայրը՝ ժան Ռուն, վորովհետեւ ինքը չուներ վոչ հրացան վոր կրակեր, վոչ վորդի՝ վոր ագռավի ձագի նման բաց աներ բերանը։

Լուի Ռուն անում եր այնքան, ինչքան պատում եր ուժը՝ վորպեսզի Փարիզի կանայք կարողանան անհոգ ծիծաղել, բայց յերբ լսում եր նա այդ ծիծաղը՝ յետ եր քաջում վախեցած — չե՞ վոր այդպես եր ծիծաղում այն կինը, վորին նա տեսավ Սուրբ Մարտինի ծառուղում, սրճարանի առաջ՝ յերբ հայրը գետին ընկած, թփը տում եր և ուղում եր սողալ։ Լուին մինչեւ քսանհինգ տարեկան՝ չմոտեցավ վոչ մի յերիտասարդ կնոջ։ Բայց յերբ լրացավ նրա քսանհինգը, և նա Սև Այրու փողոցում տեղափոխվեց մի ուրիշ բնակարան՝ նրան պատահեց այն, ինչը վաղ թե ուշ տեղի յեւ ունենում մարդկանց հետ։ Հարեվան բնակարանում ապրում եր մի յերիտասարդ բանվորուհի՝ Ժյուլյետա անունով։ Ժյուլյետային Լուին հանդիպեց յերեկոյան, նեղ, պատուտավոր սանդուխքի վրա։ Լուին գնաց նրա մոտ, վորպեսզի լուցկի ինզրի, վորովհետեւ իր կայծքարը մաշվել եր, — գնաց, բայց յետ յեկավ տռավուայն։ Մյուս որը Ժյուլյետան

Լուիյի բնակարանը փոխադրեց յերկու ձեռք շապիկ, պնակը, սանրը, և գարձավ լուիյի կինը։ Մի տարի անց՝ լուիյի նեղ բնակարանում հայտնվեց մի նոր հյուր ևս, վորի անունը զրին, Պոլ Ռուտ։

Լուի Ռուն այդպես ճանաչեց կինը։ Բայց հակառակ բոլոր այն կանանց, վորոնցով պարծենում ե գեղեցիկ Փարիզը՝ Ժյուլետան յերբեք չեր ծիծաղում այդպես անհոգ, թեև լուի Ռուն նրան սաստիկ սիրում եր, ինչպես կարող ե սիրել մի քարտաշ, վորը ծանր քարեր ե բարձրացնում և կառուցում գեղեցիկ շինություններ։ Յերեի նա յերբեք չեր ծիծաղել, վորովհետև ալլում եր Սև Այրու փողոցում, ուր մի անգամ միայն այդպես անհոգ ծիծաղեց լվացար Մարին՝ վորին զժանոց տարան։ Յերեվի նա չեր ծիծաղում նաև նրա համար, վորովհետև ուներ միայն յերկու շապիկ, իսկ լուին չեր կարողանում տալ նրան գեթ մի սե փող նոր շորի համար, վորովհետև հաճախ նա չեր ունենում վոչ սպիտակ, վոչ սե փող, և մոայլ, ծըխամորձը բերանին՝ թափառում եր Սուրբ Անտոնիոսի շրջակայքը։ Նա սաստիկ սիրում եր Ժյուլետային, բայց մատեց, վոր այդ կինը իրավունք ուներ—մսագործը դեղին փողեր ունի, նա մինչև անգամ կարող ե տեղափոխվել մի ուրիշ փողոց, և Ժյուլետան նրա հետ կակսի ծիծաղել անհոգ։ Լուին հիշեց, վոր իր հայր՝ Ժանը, հուլիսի այն առավոտյան յերբ սրբեց իր հրացանը և գնաց, նա ասաց իր լացող կնոջ՝ լուիյի մորը։

Ալիկները, պնակը և սամբը, և տեղափոխվեց մի մսագործի բնակարան, վոր Սև Այրու փողոցի վրա ձիու միս եր ծախում։ Ժյուլետան վորդուն թողեց հոր մոտ, վորովհետև մսագործը ջղային մարդ եր, նա թեև սաստիկ սիրում եր յերիտասարդ կանանց, բայց բնավ չեր սիրում յերեխաներին։ Լուին վերցրեց վորդուն, որորեց, վոր լաց չկինի։ Բայց որորում եր շատ անվարժ, վորովհետև նա սովոր եր բարձրացնել քարեր միայն, իսկ յերեխա չեր զրկել։ Այդպես, վորդին զիրկը, ծխամորձը բերանին՝ նա գնաց թափառելու Սուրբ Անտոնիոսի շրջակայքը։ Նա սաստիկ սիրում եր Ժյուլետային, բայց մատեց, վոր այդ կինը իրավունք ուներ—մսագործը դեղին փողեր ունի, նա մինչև անգամ կարող ե տեղափոխվել մի ուրիշ փողոց, և Ժյուլետան նրա հետ կակսի ծիծաղել անհոգ։ Լուին հիշեց, վոր իր հայր՝ Ժանը, հուլիսի այն առավոտյան յերբ սրբեց իր հրացանը և գնաց, նա ասաց իր լացող կնոջ՝ լուիյի մորը։

— Յես պիտի գնամ, իսկ դու, իհարկե, ուղում ես ինձ պահել։ Աքորը բարձր կտոր ե ման գալիս, նավը՝ բաց ծով, կինը՝ անհոգ կյանք։

Լուին հիշեց հոր խոսքերը և նորից համոզվեց, վոր ինքը իրավացի յեր՝ յերբ պահում եր

Գարնանը, 1869 թվին, յերբ Լուի Ռուն 28 տարեկան եր գառել, իսկ վորդին, Պոլը՝ յերկու տարեկան, — Ժյուլետան վերցրեց իր յերկու շա-

Ժյուլյետտային, իսկ Ժյուլյետտաննույնպես իրաւագակի յեր, վոր գնում եր հարուստ մասգործի մոտ:

Լուին շարունակեց նորից տներ շինել, և գայակություն անել վորդուն: Բայց շուտով վրա հասավ պատերազմը և չար պըռուսացիները պաշարեցին Փարիզը: Ել վոչ վոք չեր ուզում տներ շինել, ել չեր տեսնվում վոչ մի նոր շինություն: Պըռուսական թնդանոթների ոռոմբները խորտակում եյին գեղեցիկ Փարիզի տները, վորոնց վրա աշխատել եյին Լուին և ուրիշ քարտաշներ: Լուին վոչ փող ուներ, վոչ աշխատանք, իսկ յերեք տարու հասած Պոլը արդեն կարողանում եր լուռ բացել իր բերանը ազուտի ձագի նման: Լուիին հրացան տվին, բայց նա չդնաց, վոր յերգի և «հաց» աղաղակի, այլ մյուս հազարավոր քարտաշների, հյուսների, դարբինների նըման, նա գնաց պաշտպանելու քաղաքներից ամենից գեղեցիկը՝ Փարիզը, չար պըռուսացիներից: Փոքրիկ Պոլին իր մոտ վերցրեց տիկին Մանոն՝ մի բարի կին, վոր կանաչեղենի խանութ ուներ: Լուի Ռուն ուրիշ բանվորների հետ, ձմեռվա սառնամանիքին, վատարորիկ, Սուրբ Վենցենսի դիրքերում ոռոմբներ եր կրում և արձակում չար պըռուսացիների վրա: Նա յերկար որեր վոչինչ չեր կերել, վորովհետեւ Փարիզում սով

եր: Նրա վոտները ցուրտը տարավ, վորովհետեւ սաստիկ ցրտեր եյին լինում բաց յերկնքի տակ: Պըռուսական ոռոմբները հաճախ եյին գալիս Սուրբ Վենցենս, և կապույտ շաղիկ հագածների թիվը պակասում եր քիչ քիչ: Բայց Լուի Ռուն չեր լքում իր գիրքը, նա շարունակ կանգնած եր իր թնդանոթի կողքին, վորովհետեւ նա պաշտպանում եր Փարիզը: Յեվ բոլոր քաղաքներից ամենից գեղեցիկը արժեր այդպիսի պաշտպանության: Զնայած ցրտին և սովին, նորից լույսերը ծփում եյին փողոցներում, նորից շվայտ, զուգված տղամարդիկ խմում եյին ոշարակ, և ժըպիաը չեր հանգում անհոգ կանանց յերեսին:

Լուին գիտեր, վոր այլևս կայսր չկա, վոր հիմա, Փարիզում հանրապետություն եւ: Զբաղված լինելով իր ոռոմբերով, նա ժամանակ չուներ մտածելու, թե ինչ բան ե այդ «հանրապետությունը», բայց այն բանվորները, վորոնք գալիս եյին Փարիզից՝ պատմում եյին, վոր նորից, առաջվա նման սրճարանները լիքն են շվայտ, զուգված տղամարդկանցով և անհոգ կանանցով: Լուին յերբ լուռմեր այդ՝ նա պատկերացնում եր, վոր վոչինչ չի փոխվել Փարիզում, վոր «հանրապետությունը» գանգում ե վոչ թե Սև Արու փողոցում, այլ Յոթնաշող Աստղի լայն պողոտաներում, և վոր յեթե քարտաշները, հյուս-

ները ու դարբինները քշին պրուսացիներին՝ փոքրիկ Պոլը նորից բաց կանի իր բերանը ագռավի ձագի նման։ Այնուամենայնիվ Լուին չհեռացավ իր դիրքից, չժողեց, վոր պրուսացիները մտնեն Փարիզ։

Բայց մի առավոտ, նրան հրամայեցին թողնել թնդանոթը և վերադառնալ Սև Այրու փողոցը։

Այն մարդիկ, վորոնք կոչվում եյին «հանրապետություն»՝ յերեխի շվայտ, զուգված տղամարդիկ եյին և անհոգ կանայք, վորոնք ներս Թողին չար պրուսացիներին գեղեցիկ Փարիզը։ Ծխամորճը բերանին, Լուի Ռուն մոռայլ թափառւմ եր Սուրբ Անտոնիոսի շրջակայքը։

Պրուսացիները յեկան և գնացին, բայց վոչ վոք նոր տներ չեր շինում։ Պոլը ագռավի ձագի նման բաց եր անում բերանը, և Լուի Ռուն սկսեց սրբել հրացանը։ Այն ժամանակ, պատերին կպցրին մի ահարկու հրաման։ հրամայված եր, վոր բոլոր բանվորները հանձնեն իրենց հրացանները, վորովհետեւ շվայտ, զուգված տղամարդիկ և անհոգ կանայք հիշում եյին 48 թվի հուլիսյան որերը և անհանգստանում։

Լուի Ռուն չեր ուզում հանձնել իր հրացանը. չեյին ուզում նույնպես մյուս բանվորները, վորոնք ապրում եյին սուրբ Անտոնիոսի շրջակայ-

քում և ուրիշ տեղերում։ Նրանք հրացաններով դուրս յեկան փողոցը և կրակում եյին։ Այդ մի տաք յերեկո յեր, յերը գարունը նոր եր սկսում Փարիզում։


Հաջորդ որը Լուի Ռուն տեսավ, վոր փողոցներում խուճապով մեկնում են փակ, շքեղ կառքեր, ֆուրգոններ և սայլեր։ Սայլերը բարձված եյին ամեն տեսակի բարիքներով, իսկ կառքերում նստած եյին մարդիկ՝ վարոնց Լուի Ռուն սովոր եր տեսնել Մեծ Ծառուղու սրճարաններում։ Գնում եյին հպարտ, զուգված, բեխերը վոլորած գեներալներ, զույնզղույն գլխարկներ ծածկած պաշտօնյաներ, յերիտասարդ կանայք, սև, փայլուն փարացա հագած կղերականներ, ամեն ձեի գլխարկներով, զուգված, շվայտ պարոններ, յերիտասարդ սպաններ՝ վորոնք յերբեք չեյին յերեացել վոչ սուրբ Վենցենսի և վոչ ուրիշ դիբքերում, և վորոնք կրում եյին շքեղ ուսուցներ, հագել եյին պերճ, մետաքսե գույնըզդույն շորեր և նման եյին թութակների։ Բոլոր նըանք շտապում եյին հեռանալ քաղաքից և ապաստանել Վերսայ։ Յեկ յերբ Լուի Ռուն յերեկոյան Ոպերայի պողոտան մտավ, նա տեսավ վոր ուրանարանները դատարկել եյին. շվայտ, զուգված տղամարդիկ չեյին խմում ոշարակ, խանութները պինդ փակված եյին, և չեյին յերեկում անհոգ

կանայք, վորոնք թափառում եյին այդ խանութեաների շուրջը ու ծիծաղում: Յելիսյան դաշտի, Ոտեյլի և Սուրբ ժերմենի բնակիչները սաստիկ վրդով վել եյին այն բանից, վոր քարտաշները, հյուսները ու դարբինները չեն հանձնում հրացանները: Նրանք թողել եյին գեղեցիկ Փարիզը և հեռացել: Խավարը ուրում եր փողոցներում, հայելու նման վողորկ մայթերը նույնուիս եւաշգարել եյին, սևացել:

Լուի Ռուն տեսավ, վոր «հանրապետությունը» գնաց՝ կառքերում և ֆուրգոններում: Նա հարցը եց իր հետի բանվորներին, թե՝ ով ե հիմաքաղաքի տերը. նրան պատասխանեցին «Փարիզի կոմունան», և Լուին հասկացավ, վոր այդ «կոմունան» ապրում ե ինչ վոր տեղ՝ Սև Այրու փողոցի մոտերքը:

Բայց զուգված, շվայտ տղամարդիկ և կանայք, վորոնք թողել եյին Փարիզը՝ չեյին ուզում մոռնալ քաղաքներից ամենից գեղեցիկ այդ քաղաքը: Նրանք չեյին ուզում Փարիզը թողնել քարտաշներին, հյուսներին և դարբիններին: Յեվ նորից ոռումքները սկսեցին աները խորտակել: Հիմա այդ ոռումքերը նետում եյին վոչ թե չար պրուսացիները, այլ նրանք, վորոնք հաճախում եյին «Անզլիական» և ուրիշ սրճարաններ: Յեվ Լուին հասկացավ, վոր հարկավոր ե գնալ, նորից

բոնել իր հին գիրքը՝ սուրբ Վենցենսի ճակատում: Բայց կանաչեղենի խանութ պահող տիկին Մանոն մի ջերմեռանդ կաթոլիկ եր: Այս անդամնա հրաժարվեց իր մոտ վերցնել Պոլին, վորով հետեւ նրա հայրը, կամ նման մի անաստվածքարտաշ՝ սպանել եր Փարիզի յեպիսկոպոսին: Այն ժամանակ, Լուի Ռուն զրեց ծխամորճը բերանա, վերցրեց Պոլին իր ուսին և գնաց սուրբ Վենցենսի ճակատը: Նա ոռումքեր եր կըում թնդանոթի համար, իսկ փոքրիկ Պոլը խաղում եր դատարկված պատրոնների հետ: Գիշերը յերեխան քնում եր մոտակա մի ջրկիրի տանը: Ջրկիրը Պոլին նվիրեց մի կտոր սապոն և կավե մի ծխամորճ՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին ծխում եր Լուի Ռուն: Այժմ, Պոլը յերբ ձանձրանում եր ոռումքերի ձայնից և վասոթի հոտ փչող պատրոններից՝ նա սապոնի փշտիկներ եր արձակում: Այդ փշտիկները զանազան գույնի եյին—կապույտ, վարդագույն և սպիտակ: Նրանք նման եյին այն ոդային փշտիկներին, վորոնց շվայտ, զուգված տղամարդիկ և անհոգ կանայք գնում եյին իրենց յերեխանների համար և արձակում: Ճիշտ ե, միայն կար այն տարբերությունը, վոր քարտաշի վորդու փշտիկները ապրում եյին մի վայրէկյան միայն, իսկ այն հարուստ յերեխաններինը դիմանում եյին ավելի յերկար պապոնի փշտիկ-



ԻՆՍԻ. Ա
ԽՈՏՏՈՎՈՅԱՆ
Ակադեմիա
ՀՀՀՀ

Ներ թողնելիս՝ մոռանում եր բերանը բացել ագռավի ձագի նման և սպասել հացի։ Նա մոտենում եր «կոմունարներ» կոչող մարդկանց, վորոնց թվումն եր իր հայրը՝ և հողե դատարկ ծխամորճը ամուր բոնած բերանում, հպարտ՝ աշխատում եր նմանվել իր հորը։ Յեվ մարդիկ մի վայրկյան թնդանոթը մոռացած՝ գգվում եյին նրան ու ասում։

— Դու իսկական կոմունար ես։

Բայց բանվորները ոռւմբեր քիչ ունեյին, իրենք ել քիչ եյին։ Իսկ նրանք վորոնք թողել եյին Փարիզը և ապաստանել թագավորների աթոռանիստ Վերսայլը՝ այդ մարդիկ ամեն որ նոր դորք եյին բերում—բերում եյին ֆրանսիայի չքավոր գյուղացիներին և կովեցնում։ Նրանք ահագին քանակությամբ ոռւմբեր նվեր եյին ստացել չար պրուսացիներից։ Նրանք միշտ ավելի ու ավելի եյին մոտենում քաղաքին։ Արդեն բազմաթիվ դիրքեր գտնվում եյին նրանց ձեռքում, իսկ սուրբ Վենցենսի դիրքերում ել վոչ վոք չեր գալիս սպանված թնդանոթաձիգների տեղը բրոնելու։ Լուի Ռուն և նրա ընկերները կովում եյին մենակ։ Քարտաշը այժմ ինքն եր ոռւմբերը կրում, ինքը լցնում թնդանոթը և կրակում։ Նըման ոգնում եյին միայն յերկու բանվոր, վորոնք մի կերպ խուսափել եյին գնդակից,

Թագավորների նախկին աթոռանիստում տիւրում եր խրախճանք։ Բացված սրճարանները չեյին կարողանում տեղավորել ոշարակ խմողներին։ Սև, փայլուն փարաջա հագած կղերականները ջերմեռանդ աղոթքներ եյին վերառաքում։ Բեխերը սրած, ահարկու գեներալները տաքտաք խոսում եյին պրուսացի նորեկ սպաների հետ։ Իսկ ճաղատ սպասավորները մեծ յեռանդով արդեն կապոտում եյին պարոնների պայուսակները, վորոնք պատրաստվում եյին վերագանալ քաղաքներից ամենից գեղեցիկ քաղաքը։ Բազմաթիվ ջաներով լուսավառել եյին այն գեղեցիկ պարտեզը, վոր շինվել եր Արև-Արքայի հրամանով, և վորը շինելիս՝ հազարավոր աշխատավորներ արյուն քրտինք մտած, աշխատում եյին, չորացնում ճահիճները, կառուցում, վորպեսզի պարտեզը պատրաստ լինի նշանակված ժամանակին։ Ցերեկներին բազմաթիվ փողահարներ հաղթական փողեր եյին փչում, իսկ գիշերներին, յերբ արյունաքամ Փարիզը թաղվում եր խափարի մեջ՝ Վերսայլում սկսում եր տոնախմբությունը։

Աղգային բահակի հրամանատար Ֆրանսուա դ'Եմոնյանը բերել եր իր հետ իր հարսին՝ Գարերիել դը-Բոնիվետին, վորին նա նվիրեց շուշնների մի քնքուշ փունջ՝ իր անկեղծ և ջերմ

զգայմունքներին նշանակ: Շուշանները դրվեցին մի թանկագին, ականակուռ վաղայի մեջ, վորը մի գոհարավաճառ կարողացել եր փախցնել խոռվության որերին: Այդ փունջը Ֆրանսուա դ'Եմոնյանը մատուցել եր նաև իրեւ հաղթանակի նշանակ: Նա նոր եր յեկել ճակատից: Նա պատմում եր իր հարսին, թե ինչպես ջարդվեցին գոեհիկները, վոր շուտով իր զորքերը կվերցնեն Սուրբ Վենցենսի դիրքը և կմտնեն Փարիզ:

— Իսկ յե՞րբ կսկսեն ոպերաները, — հարցրեց Գարբիելը:

Դրանից հետո նրանք անձնատուը յեղան սիրո փաղաքշանքներին, մի բան, վոր բնական ե ճակատից յեկած հերոս փեսայի և քնքուշ հարսի համար, վոր մետաքսից ուանոցներ եր կարում իր փեսային: Իսկ սիրո մի տաք ըստելին, յերբ Ֆրանսուան ծծում եր իր հարսի շրթունքները՝ մըմնջաց.

— Հոգյակ, բայց դու չգիտես, թե վորքան դաժան են այդ կոմունարները: Հեռաղիտակով յես տեսա, թե ինչպես Սուրբ Վենցենսի դիրքում մի փոքրիկ յերեխա կրակում եր թնդանոթը: Յեվ յերեսակայիր, վոր այդ գարշելի ներոնը ծխամորճ ուներ բերանին,

— Բայց դուք նրանց բոլորին, յերեխաներին ել կկոտորեք, այդպես չե՞ իմ թանկագին,

— մըմնջաց Գարբիելը, և նրա կուրծքը սկսեց ավելի ջերմագին տեղի տալ արշավանքին մասնակից հերոսի հպումներին:

Ֆրանսուա դ'Եմոնյանը լավ եր հասկանում՝ թե ինչ ե ասում: Հետեւյալ առավոտյան նա հրամայեց իր զորքերին վերցնել Սուրբ Վենցենսի դիրքը: Լուի Ռուն կենդանի մնացած յերկու բանվորների հետ, կրակում եր զորքերի վրա: Այն ժամանակ, Ֆրանսուա դ'Եմոնյանը հրամայեց պարզել սպիտակ զրոշակ, և լուի Ռուն դադարեց կրակել. նա լսել եր այն մասին, վոր սպիտակ զրոշակը նշան ե հաշտության: Նա կարծում եր, վոր զինվորները ափսոսացին գեղեցիկ քաղաքը, և կամենում են հաշտվել Փարիզի կոմունայի հետ: Յերեք բանվորները ժպտագեմ, ծխամորճը բերաններին՝ սպասում եյին զինվորներին, իսկ փոքրիկ Պոլը, վոր այլևս սապոն չուներ փշտիկներ թողնելու համար՝ կանգնել եր նույնպես ժպտագեմ, ծխամորճը բերանում պինդ բռնած, աշխատելով նմանվել հորը: Իսկ յերբ զինվորները մոտեցել եյին դիրքերին, Ֆրանսուա դ'Եմոնյանը հրամայեց յերեք լրով նշանաձիգների՝ սպանել Սուրբ Վենցենսի այդ յերեք խոռվարաններին: Փոքրիկ կոմունարին նա ուզում եր կենդանի բռնել, վորպեսզի ցույց տա իր հարսին: Սավոյնի լեռ-

նականները ճիշտ եյին բռնել իրենց նշանը, և
յերբ զիվորները Սուրբ Վեհաբենսի մտան, տե-
սան թնդանոթի մոտ գետնին տարածված յերեք
դիակ և յերեք ծխամորճ: Զինվորները տեսնում
եյին բազմաթիվ սպանվածներ, բայց չեյին զար-
մանում, իսկ յերբ թնդանոթի մոտ նրանք տե-
սան փոքրիկ յերեխան ծխամորճը բերանին՝
նրանք շփոթվեցին, մեկը խաչակնքում եր,
մյուսը՝ սատանայի անունը տալիս:

— Դու վորտեղից լույս ընկար, գարշելի՝
փայտոջիլ, — հարցրեց գվարդիականներից մեկը:

— Յե՞ւ իսկական կոմունար եմ, — պատաս-
խանեց Պոլ Ռուն ժպտալով:

Զինվորները կատաղած, ուզում եյին ծակո-
տել նրան սվիններով, բայց ողակապետը ասաց,
վոր հրամայված ե այդ փոքրիկ կոմունարին
կենդանի փոխադրել տասնեւմեկյերրորդ զինա-
կայանը, ուր գերիներն եյին պահվում:

— Ո՞վ գիտե՞ մեղանից քանիսին ե սպանել
ես լակուր, — քրթմնջում եյին զինվորներն ու
բոթում փոքրիկ Պոլին հրացանի կոթուններով,
իսկ փոքրիկ Պոլը, վոր յերեք մարդ չեր սպա-
նել վոր միայն սապոնի փշտիկներ եր լաց
թողնում՝ չեր կարողանում հասկանալ թե ին-
չու այդ մարդիկ հայնոյում են և բոթում իրեն:
Գերի Պոլ Ռուն, վոր միայն չորս տարեկան

եր՝ այդ փոքրիկ գոեհիկը զինվորների հսկողու-
թյամբ մտավ Փարիզ: Դեռևս քաղաքի ծայրա-
մասերում կրակում եյին բանվորները և մեռ-
նում, իսկ Յելիսայան Դաշտի թաղերում, Ոպե-
րայի և Յոթնաշող Աստղի պողոտաներում սկսել
եյին զվարճությունները:

Գեղեցիկ մայիս ամիսն եր: Ծառուղիներում
կանաչում եյին շագանակի ծառերը, վորոնց տակ
շվայտ, զուգված տղամարդղիկ խմում եյին ոշա-
րակ, իսկ անհոգ կանայք՝ ծիծաղում: Յերբ մո-
տով անց եյին կացնում փոքրիկ կոմունարին՝
նրանք ձչում եյին և պահանջում, վոր իրենց
տան այդ փոքրիկ գաղանին: Բայց ողակապետը
ընդդիմանում եր հիշելով զորապետի հրամանը,
և Պոլի փոխարեն, նրանց ձեռքն եր տալիս ուրիշ
գերիներ: Իսկ ծիծաղող, անհոգ կանայք, և շվայտ
զուգված տղամարդղիկ, վորոնք վոխ եյին պահել
իրենց սրտում՝ թքում, գեղեցիկ ձեռնափայտե-
րով ծեծում եյին գերիներին և յերբ հոգնում
եյին՝ ծակոտում եյին նրանց, վերցնելով մոտով
անցնող զինվորների սվինը:

Պոլ Ռույին տարան Լյուքսեմբուրգյան այ-
գին: Այստեղ պալատի առաջ, մի մեծ ցանկա-
պատում հավաքել եյին բոլոր գերի ուսմիկներին:

Պոլը ծխամորճը բերանին՝ տալով իրեն ա-
ռանձին յերևլույթ՝ ման եր գալիս նրանց մե-

ջին, և ցանկանալով մխիթարել լացող կահանց,
ասում եր.

— Յես կարողանում եմ սապոնի փշտիկներ
բաց թողնել: Իմ հայրը՝ Հուի Ռուն ծխում եր և
կրակում թնդանոթը: Յես՝ իսկական կոմունար
եմ:

Իսկ կահայք լսելով Պոլին, ավելի դառն եյին
լալիս, հիշելով, վոր իրենք ել սուրբ Անտոնիոսի
թաղերում թողել են Պոլի նման յերեխաներ վո-
րոնք, գուցե, նույնպես սիրում եյին սապոնի
փշտիկներ թողնել:

Այս ժամանակ Պոլը նստեց կահաչի վրա և
սկսեց մտարերել սապոնի փշտիկները, — վորքա՞ն
գեղեցիկ եյին այդ փշտիկները՝ կապույտ, վար-
դագույն, սպիտակ: Բայց վորովհետեւ սաստիկ
հոգնել եր Պոլը ճանապարհին, նա շուտով քնեց
ծխամորձը ձեռքին:

Մինչդեռ Պոլը քնում եր՝ յերկու նժոյդ մի
կառք բերին Վերսայի ճանապարհով: Ֆրանսուա
դ, Եմոնյան եր, վոր իր հարսին տեղափոխում եր
գեղեցիկ Փարիզը: Յեկ նրա հարսը, Գարրիել
զը-Բոնիվետը յերբեք այնքան գեղեցիկ չեր,
ինչպես այդ որը: Յերեսին մի նուրբ շղարշ՝ նա
նման եր Փլորենցիական վարպետների քաշած
պատկերներին: Նա հազել եր մի թանկագին, մե-
տաքսյա շրջադրեստ: Հովանոցը մայիսյան շեշտակի

արեվից պահպանում եր նրա քնքուշ, սաթի
գույնի մորթը: Իսկապես, նա Փարիզի գե-
ղեցիկ կանանցից ամենից գեղեցիկն եր, և իմա-
նալով այդ՝ նա ժպտում եր անհոգ:

Քաղաքը մտնելով, Ֆրանսուա դ, Եմոնյանը
կանչեց իր զինվորներից մեկին և հարցրեց, թե
ո՞ւր ե գտնվում սուրբ Վենցենսում գերի բոնը-
ված փոքրիկը: Իսկ յերբ սիրահարված զույգը
մտավ Լյուքսեմբուրգյան այգին, տեսան ծաղ-
կած բնությունը, ավագաններն ու ծառուղինե-
րը՝ Գարրիել զը Բոնիվերի սիրաը բաբախեց հրձ-
վանքից, նա հուզմունքից սեղմեց իր փեսայի
ձեռքը և մըմնջաց.

— Հոգյակս, վորքան գեղեցիկ ե կյանքը:
Գերիները ահարեկ, ամեն ըոսկ սոլասում
եյին, թե վորին պիտի տանեն կոտորածի: Սար-
սափը պատեց նրանց յերբ տեսան հրամանատա-
րի գալուստը: Նրանցից ամեն մեկը կարծում եր
վոր հասել ե իր վերջին ժամը: Բայց ֆրանսուա
դ՝ Եմոնյանը վոչ վոքի վրա ուշք չեր դարձնում,
նա վնասում եր վոքրիկ կոմունարին: Տեսնե-
լով Պոլին քնած՝ նա թեթև հարվածով արթնա-
ցըց նրան: Արթնացած յերեխան սկզբում լաց
յեղափ, բայց հետո, յերբ տեսավ Գարրիելի
ուրախ դեմքը, վոր տարբերվում եր իր շրջա-
պատի կանանց մոայլ դեմքերից՝ նա ծխա-

մործը զրեց բերանին, և ժպտալով ասաց.
— Յես իսկական կոմունար եմ:

Գաբրիելը ատելությամբ լեցված, շուռ յեկավ
և ասաց իր փեսային.

— Իսկապես վոր փոքր ե յեղել: Յես կար-
ծում եմ, վոր նրանք ծնվում են մարդասպան.
հարկավոր ե ջնջել անխնա, բոլորին, նույնիսկ
գեռ նոր ծնվածներին:

— Այժմ, յերբ դու տեսար, մենք կարող
ենք վերջացնել մեր գործը նրա հետ,—ասաց
Ֆրանսուան և կանչեց մի զինվորի:

Բայց Գաբրիելը խնդրեց մի քիչ սպասել: Նա
ցանկանում եր այդ անհոգ և հաճելի որը ալելի
բավականությամբ անց կացնել: Նա հիշեց, թե
ինչպես մի անգամ Բուլոնյան անտառում զբու-
նելիս, տեսել եր կախ տված հողե ամաններ,
ծխամորճներ վորոնց նշան եյին բոնում յերի-
տասարդ զվարձասերները: Թեև Գաբրիել ող Բո-
նիվետը ծնվել եր ազնվական ընտանիքում՝ բայց
սիրում եր ժողովրդական զվարձությունները, և
հիմա, հիշելով նա Բուլոնյան անտառի այդ բա-
վականությունը՝ խնդրեց իր փեսային.

— Յես ուզում եմ կրակել սովորել. Ազգային
ֆնդի ուազմիկ սպայի կինը՝ պետք ե վոր իմանա
ուղիղ նշան բոնել: Թույլ տուր ինձ, փորձեմ
նշան բոնել այս փոքրիկ դահճի ծխամորճին:

Ֆրանսուա դ'Եմոնյանը վոչինչ չեր մերժել
իր հարսին: Նա դեռ նոր եր նվիրել նրան մար-
դարտյա մի մանյակ՝ վոր արժեր յերեսուն հա-
զար ֆրանկ, կազմող եր արդյոք նա արգելել իր
հարսին այդպիսի մի անմեղ զվարձություն: Նա
վերցրեց զինվորի հրացանը և տվեց Գաբրիելին:

Գերիները յերբ տեսան Գաբրիելին հրացա-
նը ձեռին՝ սարսափահար կուշ եկան մի անկյուն:
Միայն Պոլը կանգնել եր խաղաղ, ծխամորճը
բերանին, և ժպտում եր: Գաբրիելն ուզում եր
խփել յերերվող ծխամորճին: Նշան բոնելիս նա
ասաց յերեխային.

— Փախի՛ր, յես պիտի կրակեմ...

Բայց Պոլը շատ եր տեսել մարգկանց հրա-
ցան արձակելիս՝ զրա համար ել, նա հանգիստ
կանգնել եր իր տեղում:

Այս ժամանակ, Գաբրիելը համբերությունը
հատաձ՝ կրակեց: Յեվ վորովհետեւ նա առաջին
անդամն եր կրակում, ներելի յե, վոր նրա զըն-
դակը վրիպեց:

— Հոգյակս,—ասաց Ֆրանսուա դ'Եմոնյա-
նը, — դու շատ ավելի հաջող կերպով կարող ես
նետահարել սրտեր, քան նշան բոնել ծխամորճ-
ներին: Տես, դու սպանեցիր այդ գարշելուն, իսկ
ծխամորճը մաց անվնաս:

Գաբրիել զը Բոնիվետը վոչինչ չպատասխա-

նեց։ Տեսնելով արյան մի քանիքիծեր՝ նըա սիրտը սկսեց բարախել ավելի արագ, նա ավելի սեղմ մոտեցավ ֆրանսուային, և առաջարկեց տուն վերադառնալ, զգալով ամուսնական փաղաքշանքի ջերմ փափագ։

Պոլ Ռուն տարածված եր անշարժ, Յերկրի յերեսին նա ապրեց միայն չորս տարի։ Նա չտեսավ վոչ մի բավականություն։ Նա գիտեր միայն սապոնի փշտիկներ թողնել իր ծխամորձից։

Մոտիկ անցյալներում, յես Բըյուսելում հանդիպեցի մի հին կոմունարի՝ Պիեր Լոտրեկին։ Յես բարեկամացա նրա հետ, և մենավոր ծերունին ինձ նվիրեց իր միակ ունեցածը՝ կավե այն ծխամորձը, վորից հիսուն տարի առաջ Պոլ Ռուն բաց եր թողնում սապոնի փշտիկներ։ Պիեր Լոտրեկը մայիսյան այն որը գտնվում եր Լյուզեսեմբուրգյան այգում գերի տարվածների մեջ՝ յերբ Գարրիել դը-Բոնիվետը սպանեց վորիկ խոռվարաբին։ Վերսայլցիները կոտորեցին համարյա բոլոր գերիներին։ Պիեր Լոտրեկը ազատվեց միայն այն պատճառով, վոր շվայտ, զուգված տղամարդկանց և անհոգ կանանց համար հարկավոր եր նոր զբոսարաններ շինել Փարիզում։ Պիեր Լատրեկը աքսորվեց հինգ տարով։ Նա աքսորավայրից Բելգիա փախավ։ Նա կարո-

դացավ այդ բոլոր արհավիրքների ընթաւ քում ազատել և պահել Պոլի դիակի մոտ ընկած ծըլիամորձը։ Նա ինձ տվեց այդ ծխամորձը և պատմեց այն բոլորը՝ ինչ վոր յես զրեցի։

Այդ ծխամորձը յես հաճախ սեղմում եմ ի ի հուզմունքից զողացող շրթունքների մեջ։ Նրանում դեռ թարմ է մնացել փոքրիկ Պոլի շնչառությունը, զուցե և սապոնի անմեղ վլշտիկների հետքը։ Բայց գեղեցիկ Փարիզում ապրող կանանցից ամենից գեղեցիկ կողջ՝ Գարրիկը գլ-Բոենվետի ձեռքով սպանված այդ փոքրիկ կոմունարի խաղալիքը դիտելիս, — իմ սիրալ լցվում ե անհազությ վրիժառությամբ։ Այդ ծխամորձի վրա կորացած՝ իմ ուղեղը լափում է միայն մի մտածմունք, — թշնամու սպիտակ զրոշակը տեսնելիս, ձեռքից բաց չթողնենք հրացանը, ինչպես այդ արեց կուի Ռուն, և զքենք Սուրբ Վենցենսի ճակատը, վորի դիրքերում դեռ կովում են կապույտ շապիկը հաղին յերեք անվեհեր կոմունարներ, իսկ նրանց կողքին, մանուկը սապոնի փշտիկներ ե թողում։

ՀԱԽՆ ՊԵՏՀՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

ԼԵՆԻՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԼԵՆԻՆ.—Ժողովածու—Վ., Վահանյանի, Ա., Կարինյանի և Դ., Սիմոնյանի խմբագրությամբ:
2. Ա. ԴԵԲՈՒԻՆ.—«Լենինը վորպես մարտնչող մատերիալիստ» — հեղինակի նախարարանով հայկական հրատարակության առթիվ:
3. Ն. ՇՈՒԽԱԲՐԻՆ.—«Լենինը վորպես մարքսիստ»:
4. Մ. ՊԱՎԼՈՎԻՉ.—«Լենինը և ազգային հարցը»:
5. Ա. ԿԱՐԻՆՑՅԱՆ.—«Լենինը և պետությունը»:
6. Կ. ՌՈԴԵԿ.—«Լենին» — հեղինակի նախարարանով հայկական հրատարակության առթիվ:
7. Ն. ԼԵՆԻՆ.—«Մարքսի և մարքսիզմի մասին», — խըմբագրությ., Վ., Վահանյանի և Դ., Սիմոնյանի, Վ., Վահանյանի նախարարանով և ծանոթություններով:
8. Ի. ԱՏՈՒԻՆ.—«Լենինի և լենինիզմի մասին»:

ԳԻՏԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՆՐԱՄԱՏՏՉԵԼԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

1. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԵՆԳԵԼԸ.—«Կոմունիստական մանիֆեստ», Թարգմ. Պ. Մակինցյանի. Դ. Ռյազանովի պարզաբանումներով և նախարարանով հայկական հրատարակության առթիվ:
2. Դ. ՌՅԱԶԱՅՈՒՎ.—«Մարքս և Ենգել» — հեղինակի նախարարանով հայկական հրատարակության առթիվ:
3. ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ԿԱՐԱՎԱՆԻ ՀԱՆՐԱՄԱՏՏՉԵԼԻ

1. ՊԼԵԽԱՆՈՎ.—«Մոնիստական հայացք պատմության վրա»: Թարգմանություն Դ., Սիմոնյանի. նախարարան և ծանոթություններ Վ., Վահանյանի:

ՀԱԽՆ ՊԵՏՀՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

2. ՊԼԵԽԱՆՈՎ.—«Սոցիոլոգիական աշխատություններ»: Յերկերի ժողովածու III հատոր: Թարգմանություն Դ., Սիմոնյանի և Գ. Մհերաբյանի. նախարարան Վ., Վահանյանի:

ՍՈՅԻԱԼԻԶՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Ա. ՇԱՀՈՒՄՅԱՆ.—«Յերկերի ժողովածու» — խմբագրություն և նախարար Ա., Կարինյանի:
2. Ա. ԿԱՐԻՆՑՅԱՆ և Գ. ՄԻՄՈՆՅԱՆ.—«Ալ. Մարտունի-Մասնիկյան»:
3. ԶՈՆ ՌԻԴ.—«Տաս որ վոր ցնցեցին աշխարհը»:
4. Ա. ԿԱՐԻՆՑՅԱՆ.—«Ա. Շահումյանի կյանքն ու գործունեությունը»:
5. ՊԼԵԽԱՆՈՎ.—«1825 թ. գեկտեմբերի 14-ը»:

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Գ.ՐՈՍՍ.—(նկարներ), տեքստ Կ. Հալաբյանի:
2. Գ.ՈՅԻՍ.—(նկարներ), տեքստ Մ. Մազմանյանի:
3. ՄՏԵՅՆԵՆ.—(նկարներ), տեքստ Ա. Կարինյանի:
4. ՊԼԵԽԱՆՈՎ.—Թարանական թատերգությունն ու նըրկարչությունը XVIII դարում. — Թարգմ. Ալ. Շահումյանի, խմբագրությամբ Դր. Սիմոնյանի. նախարար Վ., Վահանյանի:
5. ՅՈՒԽՈՒՅՎ.—«Ինքնակենասպազություն և նկարներ»:

ԳԵՂԱՐԳԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Վ.ՍԵՎՈԼՈԴԻ ԻՎԱՆՈՎ.—«Զբահագնացք № 1469»:
2. ԵՐԵՆԲՈՒՐԳ.—«Կոմունարի ծխամորճը»:

ՀԱՅՈՀ ՊԵՏԱՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

ԴՊՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ԿՈՐԴԵԼԻԱ. — «Գնացքը փրկող աղջիկը»;
2. Կ. ՄԻՔՈՅԵՆԱՆ. — «Անմահական կայծ», (փոխադր.);
3. ՌԱԿՈՐ ՌԻՋԻ. Գ. — «Պատանի արքա»;
4. «ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՈ».—
5. Ա. ՎԵՐՇԻՆԻՆ. — «Արջի արկածները»;
6. Պ. ԶՈՒՅՈՅՍԿԻ. — «Նամակ լենինին»;
7. Ն. ԼԵԶԶԻՆՍԿԻՅ. — «Աշխատանքի պապիկը»;
8. ԱՏ. ԶՈՐՅԱՆ. — «Ծռվանը»;
9. «ԱՐԱՀԱՆՔՈՒՄ»;
10. «ՇԱՄՈՒՆՅ. — «Պատկոմ Սուրենը»;
11. ԱՏ. ԶՈՐՅԱՆ. — «Յերկաթուղին»;



Главлит № 53261.

Тираж 3000.

Типография Госиздата ССР Армении, Армянский пр., 2,

ՀՀ Ազգային գրադարան



NL0319683

11200

ԳԻՒԸ 15 Կ.



290